

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ԱՀԱՐՈՆԻՆ

Հետեւեալ երկու բանաստեղծութիւնները մեզի դրկեց Լոնտրայէն՝ բանաստեղծին եղբայրը Պր. Գրիգոր: Այս երկու կտորները գրուած են որպէս լրացում Մազազաթներ եւ Սօսեաց անտառ հատորներուն, երկու բանաստեղծութիւններուն, ինչպէս կը բացատրուի ստորեւ իւրաքանչիւրին:

Ե Բ Ե Վ Ո Յ

Վերջալոյսին... լեռներուն հետ լեռնանալ,
Մասիսին պէս արծիւներուն հիւրընկալ.
Եւ կարգալ հին մազազաթներ մշկարոյր,
Դի՛ք բանաստեղծ, ոտքին սանդալ, գլխուն խոյր:

Վերջալոյսին... ծովերուն հետ ծովանալ,
Ծագէ ի ծագ սիրելութեամբ ի ծաւալ.
Եւ մութ վիհէն սիրտ մը հանել երփնաթոյր,
Ափունքէ ափ զայն տանելով ի համբոյր:

Վերջալոյսին... հերոսացած Հայ դարձեալ,
Նայիրեան մեր բոլոր գինիով գինովնալ,
Յետոյ զոհել կրակին ամէն, ամէն անձ:

Վերջալոյսին... շառ երկինքին մօտենալ,
Եւ ըսպասել վաղուան սուրբի պէս ժուժկալ,
Որ պիտի մեզ յարուցանէ յաղթապանծ:

Վիլնոյի, 7 Հոկտ. 1948

(«Մազազաթներ» հատորին «Սիրտս Կարմիր Վարդերով» բաժնին համար, գրուած 1948ին, վերձանում 1950ին) ԱՀԱՐՈՆ
Անտիպ բնագիրէն ընդօրինակեց՝ Գր. Տ. Լոնտոն, 10. 4. 65

Ա Բ Ե Վ Ո Յ Ե Բ Ե Վ Ո Յ

Ո՞վ գիտցաւ երբեք գաղտնիքն ու հոգին,
Հայկական վրճիտ, անմեղ արցունքին.
Ո՞ր ճամբորդն անցաւ, առանց համբոյրի,
Մօտէն մեր մուրախ թուփերուն բարի:

Հայկական արցունք, Հայկական սո՛ւրբ աղբիւր,
Յաւի եւ խինդի ալեակներով բիւր,
Տո՛ւր որ քու ծոցիդ մահիկը թաքուն,
Ծագի ամպիկէն, ամէն իրիկուն:

Հայկական արցունք, վառ վառ մոմերով,
Մեր մատուռներուն մութին մէջ խրոտով,
Թո՛ղ լոյս շաւիղէդ անցնի, անընդհատ,
Մեր Յոյսին սայլակն, ոսկի եւ արծաթ:

Վիլնոյի, 2 Յունիս 1956

«Սօսեաց Անտառ»ին «Արցունքներ» քերթուած-հէքեաթին յաւելուած»: ԱՀԱՐՈՆ
(Անտիպ բնագիրէն ընդօրինակեց՝ Գր. Տ. Լոնտոն, 10. 4. 65)

Ծանօթ. Որփէոս (Ա.) հրատարակուած է «Բագմներուս կրակին դէմ» հատորին մէջ:

Իր գործերու հրատարակութենէն վերջ գրուած եւ հրատարակուած են Հատուածներ (Անդաստան 1955, թ. 5, էջ 1) · Որփէոս (Բ.) (Անդաստան 1959, թ. 10, էջ 57) · Տեսիլ (Անդաստան 1963, թ. 14, էջ 1-2):